Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 14.3/[52858]-10

Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 27-ին կայացած նիստի

քաղ. Երևան

Նախագահում էր՝

Տ.Սարգսյան	ՀՀ վարչապետ (Խորհրդի նախագահ)

Մասնակցում էին՝

Ա. Քարամյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Վ. Արամյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Է. Բաբայան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Կ. Ղազինյան	ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
Ա. Ղուկասյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ս. Պետրոսյան	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
Է. Թումանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի և տուրիզմի վարչության պետ
Ռ. Մարկոսյան	Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօրենության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար)
Ա. Հակոբյան	«Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն
Է. Հակոբյան	«Ազատ հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի նախագահ
Ա. Մխիթարյան	«Երիտասարդական ակումբների դաշնություն» ՀԿ-ի նախագահ
Ա. Թադևոսյան	«Թրեյներների ազգային թիմ» ՀԿ-ի նախագահ
Ռ. Սարդարյան	«Երիտասարդական ալիք» ՀԿ-ի նախագահ
Լ. Նալչաջյան	«Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» ՀԿ-ի փոխնախագահ
Հ. Ափյան	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ
Ց. Ակոպյան	Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ
Դ. Դավթյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողական խորհուրդի անդամ
Մ. Մովսիսյան	«Երիտակ» ՀԿ-ի անդամ
Գ. Իսկանդարյան	Երիտասարդ առաջնորդների դպրոցի կոորդինատոր
Ա. Ուդումյան	Երիտասարդության սոցիալական և զբաղվածության հարցերի գծով փորձագետ
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա. Կարապետյան	ՀՀ Կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ա. Սողոմոնյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետ

1. Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի հաստատում

(Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանը և նշեց, որ ներկայացվող հարցն ըստ էության համարվում է 2010 թվականի հունիսի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նիստի հանձնարարականի կատարողական: Արդյունքում Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօրենության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար) Ռ. Մարկոսյանի հետ համատեղ մշակվել է Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի նախագիծ, որը ենթադրում է ՀԿ-ների կողմից ներկայացվելիք ծրագրերի ուսումնասիրություն՝ ներգրավված փորձագետների կողմից: Դրանից բացի՝ կսահմանվի ՀՀ պետական բյուջեի համապատասխան ծրագրերով նախատեսված (երիտասարդական քաղաքականությանն ուղղված) ծրագրերի, մասնավորապես ՀԿ-ների դրամաշնորհային ծրագրերի, քննության իրականացման գործընթացը: Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցը բաղկացած է հետևյալ ենթագլուխներից՝

1) փորձագետների ընտրություն.

2) փորձագիտական քննության ընթացակարգ.

3) փորձագետների աշխատանքի վերահսկում և այլն:

Այսպիսով, առաջարկվում է կիրառության մեջ դնել այնպիսի մեխանիզմ, որը կապահովի ինչպես փորձագետների ներգրավումը, այնպես էլ նրանց մասնագիտական կարողությունները ու կատարվելիք աշխատանքների պատշաճ որակը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանն առաջարկեց վերանայել Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի 4.11-4.13-րդ կետերը՝ ներառելով դրույթ, ըստ որի՝

1) որպես ի գիտություն առցանց համակարգում կիրապարակվեն նաև չֆինան-սավորված (մերժված) ծրագրերի մասին տեղեկատվությունները.

2) ծրագրերը ներկայացնողներին կտրամադրվեն նաև չֆինանսավորված ծրագրերի մերժման վերաբերյալ համապատասխան գրավոր պարզաբանումներ՝ գործունեության թափանցիկության ապահովման համար:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանն առաջարկեց լրամշակել Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի նախագիծը, մասնավորապես՝

1) 2.1-ին կետից հանել առաջին նախադասությունը և այն ամրագրել ընդհանուր դրույթներում.

2) 3.2-րդ կետից հանել «առնվազն» բառը:

«Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Հակոբյանը, հիշատակելով նախորդ նիստում ընդունված որոշումը, առաջարկեց ուղեցույցի բոլոր կետերից հանել «հասարակական կազմակերպություններ» բառերը, քանի որ ծրագրերին կարող են դիմել նաև չգրանցված այլ երիտասարդական խմբեր:

«Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ Լ. Նալչաջյանն առաջարկեց ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի հավելվածի 4.1-ին և 4.5-րդ կետերում հստակ տարանջատել պետականն հասարակական սեկտորների փորձագետներից կազմվող աշխատանքային խմբերի անդամներին՝ բացառելու համար մարդկային գործոնը:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց՝

1) ուղեցույցի 1.1-ին կետում «հասարակական կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ուսանողական և երիտասարդական կազմակերպված խմբերի կամ այլ կազմակերպությունների (այսուհետ՝ հասարակական կազմակերպություններ)» բառերով.

2) հաստատել Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի վերջնական լրամշակված տարբերակը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ) Ա. Քարամյանին՝ լրամշակել Առցանց համակարգով ներկա-յացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի նախագիծը՝

ա. ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանի առաջարկությանը համապատասխան՝ 4.11-4.13-րդ կետերում ներառել դրույթ, ըստ որի՝

- որպես ի գիտություն առցանց համակարգում կհրապարակվեն նաև չֆինանսավորված (մերժված) ծրագրերի մասին տեղեկատվությունները,

- ծրագրերը ներկայացնողներին կտրամադրվեն նաև չֆինանսավորված ծրագրերի մերժման վերաբերյալ համապատասխան գրավոր պարզաբանումներ՝ գործունեության թափանցիկության ապահովման համար,

բ. ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի առաջարկությանը համապատասխան՝

- 1) 2.1-ին կետից հանել առաջին նախադասությունը և այն ամրագրել ընդհանուր դրույթներում,

- 3.2-րդ կետից հանել «առնվազն» բառը,

գ. «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Հակոբյանի առաջարկությանը համապատասխան՝ 1.1-ին կետում «հասարակական կազմակերպու-թյունների» բառերից հետո լրացնել «կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ուսանողական և երիտասարդական կազմակերպված խմբերի կամ այլ կազմակերպությունների (այսուհետ՝ հասարակական կազմակերպություններ)» բառերով.

2) հաստատել Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի վերջնական լրամշակված տարբերակը:

2. ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական գնահատման աշխատանքների մասին

(Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանը:

Անդրադառնալով փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կազմում ընդգրկված փորձագետներին (այդ փորձագետների կողմից ընտրվում են այլ փորձագետներ)՝ նշեց, որ հավասար պայմանների առկայության պարագայում միայն առաջ է գալիս մարդկային գործոնը:

Այդ կապակցությամբ առաջարկեց փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կազմում տողնել իրեն, նույն նախարարության համապատասխան վարչության պետին և խորհրդի անդամ Ա.Թադևոսյանին՝ համապատասխան փոփոխություններ կատարելով փորձագիտական քննությունն իրականացնող խմբի կազմում:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ նպատակահարմար չէ, որպեսզի դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբի փորձագետների կողմից ընտրվեն այլ փորձագետներ: Այդ նպատակով անհրաժեշտ է խմբի կազմում ընդգրկել վարչական գործառույթներ ունեցող այնպիսի աձանց (ոչ ավելի, քան 3 անձ), որոնք չեն հանդիսանա փորձագետներ:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանի առաջարկությանը համապատասխան վերանայել փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի անհատական կազմը.

2) հաստատել դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբի անհատական կազմի վերջնական լրամշակված տարբերակը.

3) հանձնարարել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների հիման վրա ապահովել համապատասխան ծրագրերի ֆինանսավորումն ու դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը:

3. Մարզերում և համայնքներում տեղական մակարդակով իրականացվող երիտասարդական քաղաքականության խթանման հարցերով զբաղվող՝ խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային խմբի հաղորդումը

(Ա. Հակոբյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Հակոբյանը և նշեց, որ առաջարկվող մոդելային մոտեցումը վերաբերում է համայնքային մակարդակներում երիտասարդական քաղաքականության ներդրմանը, համակարգմանը և վերահսկողությանը: Ընդ որում, ներկայացվող մոդելի հիմքում դրված է «Հզոր հասարակություն» հիմնադրամի կողմից մշակված տարբերակը, որը ներկայումս իրականացվում է Սևան և Հրազդան քաղաքներում ու հանդիսանում քառամյա ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մաս: Այս մոդելի վերաբերյալ ստացվել էր առաջարկ՝ վերանայելու և փոփոխելու մոդելի կառուցվածքը: Այսինքն, հանձնաժողովները կստեղծվեն քաղաքապետարանների կողմից, իսկ հետագայում տվյալ համայնքի երիտասարդության ներգրավման միջոցով հանձնաժողովների կողմից կմշակվեն համապատասխան փաստաթղթեր: Դրանից բացի՝ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի օրինակով համայնքներում ևս ստեղծել խորհուրդներ: Ըստ նախատեսվածի՝ համայնքների հանձնաժողովների կողմից մշակված փաստաթղթերը հետագայում կներկայացվեն քննարկման՝ միաժամանակ ԶԼՄ-ներով ապահովելով քննարկման ամբողջ ընթացքի լուսաբանումը: Ընդ որում, համայնքային երիտասարդական քաղաքականությունների իրականացման ամբողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը մշտապես կհամագործակցի վերջիններիս հետ:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանը նշեց, որ ըստ էության երիտասարդական քաղաքականության եվրոպական մոդելը

գործում է հետևյալ ուղղություններով՝ պետական, տարածաշրջանային, մարզային և համայնքային: Հայաստանում առկա են պետական, որոշ չափով մարզային (առկա են պետական ֆինանսավորում ստացող մարզային կառույցներ) ուղղությունները: Սակայն համայնքային մակարդակում դեռևս բացակայում են նմանօրինակ երիտասարդական կառույցները: Ուստի, առաջարկվում է քաղաքապետարաններին կից ստեղծել երիտասարդական խորհուրդներ (լրացուցիչ ֆինանսավորում չպահանջող):

ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանն առաջարկեց լրացուցիչ ուսումնասիրել ներկայացված փաստաթուղթը և այն համապատասխանեցնել ՀՀ օրենսդրությանը: Ինչ վերաբերում է ձևավորվելիք հանձնաժողովներին, ապա դրանք կարող են լինել բացառապես հասարակական հիմունքներով: Այդ կապակցությամբ առաարկեց մշակել համապատասխան ուղեցույց և այն տրամադրել բոլոր համայնքների ղեկավարներին:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ երիտասարդական խորհուրդների ստեղծման պարագայում «համայնքային բյուջե» արտահայտությունը ենթադրում է, որ վերջիններիս բյուջեներում պետք է նախատեսվեն համապատասխան հատկացումներ. ինչը դիտվում է որպես պարտադրանք: Այսինքն, համայնքներըն իրենց բյուջեների կազզման ժամանակ, բացի ավագանուց, պետք է նախատեսեն ընթացակարգ, որով երիտասարդությանը վերաբերող հարցերը նախապես կքննարկվեն համապատասխան հանձնաժողովների հետ: Ընդ որում, նման ընթացակարգը հնարավոր է նախատեսել բացառապես օրենքով:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Հակոբյանի՝ Մարզերում և համայնքներում տեղական մակարդակով իրականացվող երիտասարդական քաղաքականության խթանման հարցերով զբաղվող՝ խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային խմբի հաղորդումը.

2) հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանին՝ իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ լրացուցիչ ուսումնասիրել ներկայացված փաստաթուղթը և այն համապատասխանեցնել ՀՀ օրենսդրությանը:

4. «Երիտասարդության մասին» օրենքի նախագծի քննարկումներ իրականացնելու հարցերով զբաղվող Խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային խմբի հաղորդում

(Լ. Նալչաջյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4-րդ հարցը զեկուցեց «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» Հ Կ-ի փոխնախագահ, «Երիտասարդության մասին» ՀՀ օրենքի նախագծի հարցերով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար Լ. Նալչաջյանը և նշեց, որ

աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝ «Մատչելի բնակարան երիտասարդներին» պետական նպատակային ծրագիրը: Արդյունքում առաջարկվում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում ձևավորել աշխատանքային խումբ և ուսումնասիրել օտարերկրյա պետությունների երիտասարդությանը վերաբերող օրենսդրությունը՝ այն զուգորդելով հանրային քննարկումների հետ:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի կողմից ստեղծած աշխատանքայն խմբի միջոցով իրականացնել միջազգային օրենսդրության ուսումնասիրությունը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» ՀԿ-ի փոխնախագահ, «Երիտասարդության մասին» ՀՀ օրենքի նախագծի հարցերով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար Լ. Նալչաջյանի՝ Երիտասարդության մասին օրենքի նախագծի քննարկումներ իրականացնելու հարցերով զբաղվող Խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային խմբի հաղորդումը.

2) առաջարկել «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» ՀԿ-ի փոխնախագահ, «Երիտասարդության մասին» ՀՀ օրենքի նախագծի հարցերով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար Լ. Նալչաջյանին՝ համագործակցելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանի հետ, եռամսյա ժամկետում ուսումնասիրել միջազգային օրենսդրությունը, կատարել երկրների համեմատական դասակարգում և ըստ այդմ ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդին ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2010 թվականի N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈՂՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով առավել արդյունավետ, համակարգված ու հրապարակային դարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված դրամաշնորհների տրամադրման գործընթացը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 5-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Խորհուրդը ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ վարչապետին
առընթեր ազգային երիտասարդական
քաղաքականության խորհրդի
27 հոկտեմբերի 2010թ. նիստի N 1 որոշման

Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույց

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն ուղեցույցը սահմանում է առցանց համակարգով (այսուհետ՝ Համակարգ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների և հասարակական կազմակերպության կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ուսանողական և երիտասարդական կազմակերպված խմբերի կամ այլ կազմակերպությունների (այսուհետ՝ Հասարակական կազմակերպություններ) դրամաշնորհային ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր) փորձագիտական քննության իրականացման գործընթացը:

1.2. ՀՀ վարչապետի՝ 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N785-Ա որոշմամբ հաստատված ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության համաձայն՝ Խորհրդի խնդիրների ու գործառույթների թվին են պատկանում երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառում պետական ծրագրերի քննարկումը, դրանց ֆինանսավորման անհրաժեշտության, ծավալների և ձևերի մասին առաջարկությունների մշակումը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ծրագրերի ֆինանսավորման վերաբերյալ փորձագիտական եզրակացության կազմումը, ազգային երիտասարդական քաղաքականությանն առնչվող որոշումների ընդունման գործընթացին երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառի ոչ պետական հատվածի ներկայացուցիչների և փորձագետների մասնակցության գործուն մեխանիզմների ապահովումը:

1.3. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգը, որն արժանացել է ՀՀ

վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի հավանությանը, տեղակայված է cragrer.am կայքէջում և 2010 թվականի հուլիսի 1-ից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից օգտագործվում է հասարակական կազմակերպությունների համար նախատեսված դրամաշնորհների տրամադրման նպատակով:

1.4. Առցանց համակարգի միջոցով ներկայացված ծրագրերը գնահատվում են Համակարգում գրանցված փորձագետների կողմից՝ Համակարգի կողմից տրամադրվող առցանց գործիքների միջոցով:

1.5. Դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը ձևավորում է դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ (այսուհետ՝ Համակարգող աշխատանքային խումբ): Աշխատանքային խմբի անդամներից մեկը կատարում է Համակարգի ադմինիստրատորի պարտականությունները:

1.6. Դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբի առաջին անհատական կազմը հաստատվում է Խորհրդի կողմից, իսկ հետագայում դրանցում փոփոխությունները կատարվում են Համակարգող աշխատանքային խմբի կողմից, որը ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ կատարած աշխատանքների մասին հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին:

2. Փորձագետների ընտրություն

2.1. Համակարգում որպես փորձագետ գրանցվելու համար կարող են դիմել ՀՀ բոլոր քաղաքացիները, ովքեր ունեն ծրագրերի մշակման և իրականացման բավականաչափ փորձ, ինչպես նաև բավարար փորձագիտական պատրաստվածություն Համակարգով նախատեսված ծրագրային ոլորտներում:

2.2. Համակարգում գրանցվելիս փորձագետը պարտավորվում է տրամադրել գործող կոնտակտային տվյալներ, հավաստի և թարմ տեղեկատվություն իր մասին և նշել միայն այն ոլորտները, որոնց վերաբերյալ նա ունի բավարար փորձագիտական պատրաստվածություն, որը հստակ հիմնավորումներով պետք է արտահայտվի իր ինքնակենսագրական փաստաթղթում (համապատասխան աշխատանքային փորձ, կրթություն, ոլորտում իրականացված ծրագրեր, մասնակցություն ոլորտային դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների, հրատարակված աշխատանքներ և այլն): Հարկ եղած դեպքում Համակարգող աշխատանքային խումբը կարող է պահանջել որոշ ոլորտներում փորձագիտական պատրաստվածության լրացուցիչ հիմնավորումներ:

2.3. Գրանցվելիս փորձագետը պարտավորվում է հրաժարվել իրեն փորձագիտական գնահատման տրված այն ծրագրերից, որոնց ներկայացնող կազմակերպության հետ ինքը կամ իր ընտանիքի անդամն ունի ուղղակի կապ (տվյալ կազմակերպության ղեկավար է կամ անդամ):

2.4. Փորձագետի դիմումը համակարգի կողմից ստացվելուն պես այն ստուգվում է, և եթե Համակարգող աշխատանքային խումբը դիմողի կենսագրությունում չի գտնում բավարար հիմնավորումներ նշված փորձագիտական ոլորտների համար, դիմողին ներկայացվում է լրացուցիչ տեղեկատվության տրամադրման գրավոր (հարցաթերթիկ) կամ բանավոր (հարցազրույց) պահանջ:

2.5. Համակարգող աշխատանքային խումբը կարող է պակասեցնել դիմողի՝ նշված փորձագիտական ոլորտների ցանկը, եթե ներկայացված հիմնավորումները չեն համարվել բավարար:

2.6. Լրացուցիչ տեղեկատվության ուսումնասիրումից հետո փորձագետի նշված այն ոլորտները, որոնք բավականաչափ հիմնավորված էին, հաստատվում են, և փորձագետը ստանում է համակարգում ծրագրեր գնահատելու հնարավորություն:

2.7. Նոր գրանցված փորձագետներին Համակարգող աշխատանքային խումբը տրամադրում է խորհրդատվություն համակարգում աշխատելու պայմանների, կանոնների, ծրագրերի ֆինանսավորման գերակայությունների և տեխնիկական խնդիրների վերաբերյալ: Փորձագետներին կտրամադրվի նաև ծրագրերի ֆինանսական խնդիրներին առնչվող առկա պետական ստանդարտների մասին տեղեկատվություն:

3. Փորձագիտական աշխատանքի համար վճարման կարգը

3.1. Ծրագրերի փորձագիտական քննություն իրականացնող խմբում (համաձայնությամբ) ընդգրկվելուց հետո փորձագետը ծառայությունների մատուցման մասին պայմանագիր է կնքում «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ, որի հիման վրա կատարվում են նրա կողմից փորձագիտության ենթարկված ծրագրերի համար վճարումները:

3.2. Յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու համար փորձագետին վճարվում է հոնորար՝ տասնհինգ հազար դրամ (որը չի ներառում ֆիզիկական անձանցից պահվող հարկերն ու վճարները): Աշխատանքի համար վճարումները կատարվում են եռամսյակ առ եռամսյակ:

4. Համակարգում ծրագրերի փորձագիտական քննության կարգը

4.1. Ծրագրերի փորձագիտությունը կատարվում է համակարգում գրանցված պետական և հասարակական սեկտորների փորձագետների կողմից: Փորձագետների նշանակումը կոնկրետ ծրագրին կատարում է Համակարգող աշխատանքային խումբը: Համակարգող աշխատանքային խմբի անդամը միաժամանակ չի կարող լինել դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբի անդամ:

4.2. Առցանց դրամաշնորհային համակարգը ծրագիրը հանձնելուն պես կայքի ադմինիստրատորին ցույց է տալիս բոլոր այն փորձագետների ցանկը, որոնց փորձագիտական ոլորտները համապատասխանում են տվյալ ծրագրի թեմատիկ ծածկույթի հետ: Համակարգում երևում է, թե ամեն փորձագետ քանի ոլորտով է համապատասխանում տվյալ ծրագրին, տվյալ փորձագետը պետական սեկտորի±ց է, թե± հասարակական, ինչպես նաև տվյալ փորձագետների կողմից առ այդ ժամկետը փորձագիտության ենթարկված ծրագրերի քանակը:

4.3. Ամեն ծրագիր անկախ փորձագիտական քննության է ենթարկվում առնվազն 4 փորձագետի կողմից:

4.4. Համակարգող աշխատանքային խումբը պարտավոր է անպայման ապահովել պետական և հասարակական սեկտորներից փորձագետների առկայություն, տվյալ ծրագիրը քննողների կազմում:

4.5. Ծրագիրը տվյալ փորձագետին նշանակելու առաջին պայմանը ծրագրի թեմատիկ ծածկույթի և տվյալ փորձագետի փորձագիտական ոլորտների համապատասխանությունն է: Եթե կան մի քանի փորձագետներ, ովքեր իրենց ոլորտներով համապատասխանում են տվյալ ծրագրին, ապա փորձագետների նշանակման ժամանակ նախապատվությունը տրվում է այն փորձագետներին, ովքեր իրենց փորձառությամբ առավելապես համապատասխանում են տվյալ ծրագրին կամ էլ առ այդ պահը համեմատաբար փոքր թվով ծրագրեր են ենթարկել փորձագիտության:

4.6. Ծրագիրը նշանակելուց հետո փորձագետը էլեկտրոնային փոստով նամակ է ստանում, որտեղ նրան առաջարկվում է փորձագիտության ենթարկել տվյալ ծրագիրը: Փորձագետը պարտավոր է եռօրյա ժամկետում հաստատել իր պատրաստակամությունը տվյալ ծրագիրը քննելու համար: Եթե փորձագետը այս կամ այն պատճառով հրաժարվում է ծրագրի փորձագիտությունից կամ եռօրյա ժամկետում չի պատասխանում առաջարկին, ապա նշանակվում է նոր փորձագետ:

4.7. Համաձայնվելով քննել տվյալ ծրագիրը՝ փորձագետը պարտավորվում է տասնօրյա ժամկետում տալ իր վերջնական փորձագիտական եզրակացությունը՝ առցանց համակարգում գնահատելով տվյալ ծրագիրը:

4.8. Տասնօրյա ժամկետի ավարտից հետո ծրագիրն այլևս հասանելի չի լինի փորձագետի համար, և եթե փորձագիտական քննությունը չի ավարտվել, ապա ծրագրի փորձագիտական գնահատումը չի դիտարկվի, իսկ փորձագետը կարող է

զրկվել դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբի անդամի իր կարգավիճակից:

4.9. Փորձագետը ծրագիրը գնահատելիս պարտավորվում է ծրագրի յուրաքանչյուր մաս գնահատել ոչ միայն համապատասխան բալերով, այլև ամեն բալ նշանակելիս, գնահատման ձևի համապատասխան, բաժնում ներկայացնել տվյալ գնահատականի ամփոփ հիմնավորում (թե՛ դրական, թե՛ բացասական գնահատականների պարագայում):

4.10. Փորձագետները պարտավորվում են նաև պահպանել իրենց փորձագիտությանը հանձնված ծրագրերի գաղտնիությունը, փորձագիտական գնահատման գործընթացին իրենց մասնակցության կոնֆիդենցիալիությունը, ինչպես նաև գնահատման գործընթացի անկախությունը և անաչառությունը:

4.11. Բոլոր փորձագիտական եզրակացությունները ստանալուց հետո Համակարգող աշխատանքային խումբը կազմում է տվյալ մրցույթին մասնակցող դրամաշնորհային ծրագրերի գնահատման ամփոփ արձանագրություն: Փորձագիտական եզրակացությունների բալերի գումարման պարզ հաշվարկով հաստատվում է «հաղթած» ծրագրերի ցանկը՝ ելնելով տվյալ եռամսյակի համար առկա ֆինանսական միջոցների գումարի չափերից: Արձանագրությունը ներկայացվում է երիտասարդական քաղաքականության լիազոր պետական մարմին:

4.12. Հաղթող կազմակերպությունները տեղեկացվում են որոշման մասին, իսկ ներկայացված բոլոր ծրագրերի ցանկը՝ ներառյալ չֆինանսավորված (մերժված) ծրագրերը, գումարային բալերով հրապարակվում է առցանց համակարգում:

4.13. Մերժում ստացած կազմակերպություններն իրավունք ունեն դիմելու Համակարգող աշխատանքային խմբին իրենց ծրագրի մերժման պատճառների մասին ամփոփ տեղեկատվություն և համապատասխան գրավոր պարզաբանումներ ստանալու համար, ինչը նրանց կօգնի վերանայել ծրագիրը և դիմել հաջորդ վերջնաժամկետին՝ բարելավված տարբերակով: Համակարգող աշխատանքային խումբը դրամաշնորհային ծրագրեր մշակելու և առցանց համակարգով ծրագրերի ներկայացման խնդիրների շուրջ պարբերաբար կազմակերպում է սեմինար-խորհրդակցություններ, մշակում ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլն:

4.14. Հաղթող կազմակերպություններն այնուհետև հրավիրվում են երիտասարդական քաղաքականության լիազոր պետական մարմին՝ տեխնիկական հարցերի պարզաբանման, ծրագրի վերջնական համաձայնեցման, պետական բյուջեից ֆինանսավորման չափանիշներին համապատասխանեցման և ֆինանսավորման պայմանագրի կնքման համար: Պայմանագիրը կնքվում է «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ:

4.15. Պայմանագիրը կնքվելուց հետո ծրագրի վարույթը մինչև վերջնական հաշվետվության մշակման փուլն իրականացվում է դիմող կազմակերպության և «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

5. Փորձագետների աշխատանքի որակի վերահսկում

5.1. Ծրագրերի փորձագիտական եզրակացությունների որակը պետք է պարբերաբար ենթարկվի քննության Համակարգող աշխատանքային խմբի և երիտասարդական քաղաքականության լիազոր պետական մարմնի կողմից: Փորձագիտական քննության որակը բարձրացնելու նպատակով Համակարգող աշխատանքային խումբը պարբերաբար կազմակերպում է դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբի անդամների խորհրդակցություններ ու հանդիպումներ: Իրականացված աշխատանքների արդյունքները պարբերաբար պետք է ներկայացվեն ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդ:

5.2. Թերի փորձագիտական եզրակացությունների տրամադրման, ոչ անաչառ գնահատման, գործընթացի գաղտնիության խախտման և փորձագիտական այլ պարտականությունները չկատարելու դեպքերի արձանագրման պարագայում փորձագետները հեռացվում են դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2010 թվականի N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈՂՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության գործընթացն ապահովելու նպատակով առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 5-րդ կետի 3-րդ ենթակետով, 12-րդ կետով, ինչպես նաև Խորհրդի աշխատակարգի 6-րդ կետով՝ Խորհուրդը ո ր ո շ ու մ է՝

1. Ստեղծել դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ա. Քարամյան - խմբի ղեկավար ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (Խորհրդի նախագահի տեղակալ),

Ա. Սողոմոնյան - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետ,

Ա. Թադևոսյան - ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ:

2. Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցի 1.5. կետին համապատասխան հաստատել դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խմբին և դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբին՝

ա) առաջնորդվելով Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցով՝ ապահովել ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների տրամադրումը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը:

բ) դրամաշնորհային առցանց համակարգի փորձնական գործարկման արդյունքների ուսումնասիրության հիման վրա վեցամսյա ժամկետում կատարած աշխատանքների մասին ներկայացնել հաշվետվություն, իսկ անհրաժեշտության դեպքում ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցում և դրամաշնորհային առցանց համակարգում կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ:

4. Հանձնարարել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմնին՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների հիման վրա ապահովել համապատասխան ծրագրերի ֆինանսավորումն ու դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ վարչապետին
առընթեր ազգային երիտասարդական
քաղաքականության խորհրդի
27 հոկտեմբերի 2010թ. նիստի N 2 որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող խմբի

Վ. Տերտերյան	-	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ,
Վ. Արամյան	-	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ,
Կ. Ղազինյան	-	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ,
Ս. Պետրոսյան	-	Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի տեղակալ,
Ա. Ղուկասյան	-	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ,
Ա. Ավետիսյան	-	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ,
Ա. Պողոսյան	-	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի տեղակալ,
Ա. Ասատրյան	-	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ,
Է. Բաբայան	-	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ,
Ա. Պապյան	-	Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ,
Ա. Հակոբյան	-	ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ, «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ),
Լ. Թոփլաղալցյան	-	«Գեղարքունիքի՝ մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
Ա. Մինասյան	-	«ԿԱԶԱ» շվեյցարական հիմնադրամի աշխատակից, «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության վարչության անդամ (համաձայ-նությամբ),

Ա. Մանասյան	-	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ, IAB բիզնես կենտրոնում մարկետինգի և վաճառքի գծով ավագ թրեյներ (համաձայնությամբ),
Ա. Մուսոյան	-	«Ազգային առաջնորդության ինստիտուտ» հասարակական կազմակերպության աշխատակից (համաձայնությամբ),
Զ. Լավչյան	-	ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ (համաձայնությամբ),
Է. Ղազարյան	-	«Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
Ի. Նալբանդյան	-	«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ),
Լ. Նալչաջյան	-	ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային կազմակերպության կազմակերպչական-զարգացման բաժնի աշխատակից (համաձայնությամբ),
Հ. Օհանյան	-	«Երիտասարդական շունչ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
Հ. Ակարմազյան	-	ՀՊՃՀ էներգետիկական ֆակուլտետի ջերմաէներգետիկայի և շրջակա միջավայրի պաշտպանության ամբիոնի դասախոս (համաձայնությամբ),
Հ. Համբարձումյան	-	«Մունետիկ» հասարակական կազմակերպության փոխնախագահ (համաձայնությամբ),
Ռ. Մարկոսյան	-	ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի քարտուղար, ԵՊՀ պրոռեկտոր (համաձայնությամբ),
Ս. Գաբրիելյան	-	«Կարիքավոր մարդիկ» չեխական միջազգային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Շիրակի մարզի տարածքային միգրացիոն տեղեկատվական կենտրոնի համակարգող (համաձայնությամբ),
Տ. Օհանյան	-	«Միջմշակութային երկխոսության, ժողովրդավարության և խաղաղության երիտասարդ ակումբ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
Ա. Քոսյան	-	«Բնության բարեկամներ» հասարակական կազմակերպության իրավաբան (համաձայնությամբ),
Վ. Հովեյան		«Ուսանողների հայկական ֆորում» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ):